



ԱՌ ՇԻՐՄԱԻ

ՍԻՐԵԼԻՈՅ ԵՂԲՕՐ ՀՈԳԵԿՑԻ

Հ. ԱՐՍԷՆ Վ. ՍՈՒՔՐԵԱՆ

ԾԱՂԿԸՆԿԷՅ ԹԱՌԱՄԵԼՈՅ

ՅՈՒՇՔ ԵՒ ՀԱՌԱՋՔ

Մինչև ցերբ ոչ դադարիցէք վայրենամուլ Հանդրին ալիք  
Զեղերական 'ի մրկանունսդ առեալ գուժել բօթ արհաւրաց .  
Նա յամսոց հետէ զոգույս գրաւեալ կորով վըտարանդի  
Կըղզեկիս յախանց 'ի տար փոխէք յաշխարհ տըրտմաթախիժ ,  
Ուր յուշք, կըսկիժ եւ հառաչանք :

Ո՛վ իցէք 'ի սուրբ տեղու՛յդ այդ պարախումբ վըտտեալ պատկերք,  
Արտասոււածոր սյախցդ 'ի քօղ ածեալ ժըղիս երերազին . . .  
Ո՛հ, զըրդեկին ողբան ըզմահ, ըզսիրելոյ հարազատի,  
Ըղհոգեկցի այլք զանձկալոյ, սըրտահանոյ ըզմըտերիմ,  
Կամ 'ի հանդէս մըտաց վարժիչ :

Վէ՛մ կափարիչ անդ տըխրերանգ զեռանդնավառ ծածկէ զըզի,  
Զորով ժամու յառաջ փարէր լոկ մըտերիմ սըրտից գորով .  
Ո՛հ, արեզին 'ի միջակէտ կենաց շիջեալ լոյս դալկահար,  
Սեաւ գիշերոյ փոխանակեաց դառն եւ աղի արտասուաց սուգ,  
Ողորմ լալօնք աշխարահեժ :

Դու միայն, Արսենիէ, կողկողազին բիւր 'ի կականս,  
Միայնակ խաղաղաւէտ նընջես անխուով յաւէժն 'ի քուն . . .

Տուր 'ի դուրս , շիրիմդ , զհատորս ոգւոց այսքան հեծեծելոց ,  
Զորս , անգութ աւարառուդ , զոյզ ընդ գլխոյն սիրեցելոյ՝  
Հափափեցեր յանյազդ 'ի ծոց ,

Այլ մի . . . կացցեն մասունք՝ ուր եւ դառնալ է բոլորին ,  
Ուր անողոք կապեալ հրաման ժողովեսցէ զոգիս ամէն ,  
Ուստ հնարք տեղի տան արուեստից , եւ ըրկ անդարձ իշխէ վրճիւս .  
« Մարդոյ ընդ բիւր շըրջանս յածեալ թէ եւ ամաց թափառիցի ,  
Հուսկն հանգիցէ յայս օթեւան » :

Որպէս թիթեռն երփնապաճոյճ 'ի մօտալուտ կենացն իւր հուն :  
Ճախրասըլաց պարզեալ ըզթեւան օդոց 'ի սիւզ անուշարոյր ,  
Ըղնախկին եւ ըղվերջին , աւանդ , ժրմտի արփուոյն 'ի լոյս ,  
Եւ հուսկ ըզմէն ողջունելով ըղնըկարէն ծաղկանց թերթիկ ,  
Սլանայ 'ի կէտն անդարձական .

Զոյզ ընդ երկայն ամաց հողվս Սերաստացոյ վեհին 'ի տուն ,  
Ի խանձարուրըս սրբութեան եւ իմաստից փրթթեալ 'ի գեղ ,  
Սաւառնեցար հանգոյն , եղնկ , գոգցես յողջոյն 'ի հրաժեշտի ,  
Թափ խոյանացդ 'ի կըղզեկէս առեալ յաշխարհըս տարադէմ՝  
Ի խոյզ ծաղկանց իմաստութեան :

Այլ երփին ծաղկունք , աւանդ , են անցաւորք յաւիտենիս .  
Ծաղիկ՝ զոր որոնես յիմաստից մարգ վայելչազարդ ,  
Ծաղիկն անմահութեան ոյր ցանգ ժրմտին թերթք կենսալիր ,  
Գըտցես դու ոչ 'ի հողազանգ բուսոյ պատկեր ծաղկափրթիթ ,  
Որոյ ըսկիզբն է իւր աւարտ :

Միտք եւ խոհք , աստուածասերմն արկեալ արմատ 'ի մահացուս ,  
Ո՛հ , քանի՛ չըքնաղագեղ բերէք բողբոջս իմաստութեան .  
Յերկրեղինաց յերկինս 'ի վեր աճունաձիգ շառաւիղեալ ,  
Ըղնիւթեղէնս 'ի հոգեկան պըտղաբերէք փոխեալ խայրիս ,  
Ստեղծողք հանգոյն վեհն Արարչի :

Ընդ քիրտն անխոնջ սիրավաստակ եկեալ զամաց շըրջանս յորով ,  
Ծախեցար եւ ծախեցեր ըզգըրենոյ զիմաստից հիւթ ,  
'Գ եօթնավրտակ լեղուաց ակունս յորգեալ մեղեր հանճարաբոյժ ,  
Այլ ծարաւի միշտ գիտութեանց նորոգ ուղխից ելեալ 'ի խոյզ՝  
Ըզհինն 'ի նորըս ձուլէիր :

Գամ մի ժըմիտ 'ի դէմս հելլէն խընդաց երաստ մուսոյախուժք ,  
Քեւ յուսակնեալ թէ յառնիցէ արդեօք խանդից նոցուն թարգման ,  
Ընդ հայակոյտ նըւագածու քաջ գուսանաց գողթնաբուսիկ ,  
Ըզքաղցրանոյշ զիւրեանց քընար հընչեւ հովիտս Արարատայ .  
Այլ յոյս՝ կոկոն է բացխըփիկ :

Ի պատրանս համայն 'ի նոյն համատիոց կացեալ երամ,  
Անկասկածք ընդ դաւադիր նետս Օրհասին անագորոյն,  
Գեղեցիկ յուսով աւուրց' ոյր աշալոյս ծայրակարմիր  
Աւետէր պայծառափայլ եռանդնաբորբ մեղ միջօրէ . . .

Այլ զինչ այս թուիս ամպ տըխրերանգ...

Հիմ 'ի դալուկն հարեալ ողջոյն հեծեո տըխուր, Արսենիէ . . .  
Ո՛վ հարուած աղետալի, վէրք մահառիթ ցաւոց ոգւոյդ . . .  
Ի բաց, 'ի բաց, հրէչ ահարկու, գերանդավառ հընձող Օրհաս.  
Մեղք են մոլել վայրադարար 'ի տունկ դալար եւ աճեցուն,

Ի տունկ . . . աւաղ . . . նա թառամի :

Որպէս մըչակ խնամոտ փութով ընդ քիրտն անցեալ բազմատաժան,  
Ըզկէս կենացն անդուլ 'ի նոյն բերեալ հանդէս սիրավաստակ,  
Բարգաւաճ ըզգըրախտին դործէ ըզհող աղնըւարոյս,  
Եւ մինչ խայրեացն անդ 'ի պըտկել բիւրաբեղուն առատութեամբ,

Խայտայ 'նդ վայել հանդերձելոյն .

Ամհի վառեալ զմոլուցս յորդավէժ գետ սանձակոտոր,  
Բուռն ընդ արիս աղխաղխելով՝ գերիէ խրլէ եւ կոճոպէ  
Ըզտունկ, զարմատ, եւ պըտղաճոխ ըզհաստաբեստ ծառոց ըլլուն,  
Հեղեղատ աւաղակոյտ լոկ զըզուանաց պատկեր տըխուր

Հէգ մըչակին թողեալ փոխան .

Այսպէս հարուած մահահրաւէր, այսպէս խորչակ հիւանդութեանց  
Առ արմին պըտկեալ զկոկոնըդ խամրեցոյց, Արսենիէ .  
Թըռեան գնացին յոյս մեր, վաստակք քո հողմավար պէս տերեւոց,  
Տաղովալի յայնժամ զըտաւ յաչսըդ մահացուն բախտ յեղյեղուկ . . .

Ազնըւազոյն խընդրեցեր կեանս :

Գերաբուն վառեալ 'ի յոյս, հաւատս, 'ի սէր երկնատոյր,  
Ի Գողգոթմ վըշտացդ՝ ըզխաչդ ընդ ուն առեալ վերաժաման,  
Ի սեղան մահուն 'ի զոհ հոգեմատոյց ընծայեցար,  
Առ որ զինքնին միշտ պատարագ աստուածանիւթ նըւիրէիր . . .

Եւ ծրարեցար յԱնեղն 'ի լոյս :

Ա՛րկ եւ վերջին լոկ հայեցուած 'ի տըրտմասուգ ցաւոցս հովիտ,  
Ուր ըզնըչխարդ աւանդեցեր առ վէմ՝ խօսուն 'ի յիշատակ .  
Հայեաց, յիշեա, եւ խրախացիր զերծեալդ 'ի կեանս երանաւէտ .  
Ո՛հ, հայեցայց և ես մըտօք ցանգ 'ի քնարանդ յայդ խաչաղարդ,  
Ի յուշ, 'ի յոյս, 'ի հառաչանս :

Հ. Ա. Թ.